

Ազդարարության Փող

Trumpet's Sound

39-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2008

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

«Որովհետև Տերն Ինքը ազդարարության
հրամանով, հրեցակաղետի ձայնով եւ
Աստու փողովը լիսի իջնի երկնից»:
Ա Թես. 4:15

For the LORD HIMSELF will descend
from heaven with a cry of command,
with the Archangels call, and with
the sound of the Trumpet of God.
1 Thess. 4:15

«Հա՛յր մեր...»



«Այդ երեխաներին թո՛ղ տվեք և նրանց մի՛ արգիլեք Ինձ մոտ գալ...» Մատթ. 19:14:



Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHING BY THE
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.armenianbrethren.org

Կազմի նկարը՝ «Զատիկ» մանկատուն (2007 թ.), լուսանկարիչ՝ Դերենիկ Պարճամյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղթական կյանք	Հրաչ Գույումճյան
Այցելություն հայրենիք	Հրաչ Գույումճյան
Փոխված կյանքեր	Լիանա Մկոյան
Խնդիրներ, որոնց բախվում են երեխաները	Մանկանց ավետ. ընկ.
Այս բանը Իճճից է	Սյուզան Խաչոյան
Աստծո սպառազինությունը (3)	Մեթյու Հիլլիեր
Միացան Աստծո վրանի տակ	Մարի Գույումճյան
Աստվածաշնչյան դասընթաց (7)	Խմբագրական
Մեղավոր եմ ծնունդո՞վ, թե՞ ստեղծումով	Վարդան Սարգիսյան
Տասը պատվիրանները (6)	Հրաչ Գույումճյան
Երկնքին պարզված ծառը	Մանկանց ավետ. ընկ.
Մի երգի պատմություն	Վարդան Սարգիսյան
Տիրոջ վախը	Հովիվ՝ Հրաչ Հակոբյան
Հարատևություն (2)	Դոկտ. Արմեն Կաքավյան
Հարցազրույց	Խմբագրական

Հաղթական կյանք

Ունենալով այս առիթը՝ ցանկանում ենք շնորհավորել հայրենիքի եւ սփյուռքի մեր ընթերցողների Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը՝ մաղթելով հոգեւոր աճ, հաղթական կյանք, եւ որ 2008-ը լինի մեր սիրելի Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան սուրբ տարին:

Մենք հոգեւոր պատերազմի մեջ ենք, եւ այս պատերազմը չարի դեմ է, մեր մարմնի ցանկությունների դեմ է, որոնք անդադար Աստծո Հոգուն հակառակ են գործում: Ո՞վ պիտի ազատի մեզ այս վիճակից: Աստծո Խոսքը հստակ ասում է, որ մենք մարդկային ուժով չենք կարող հաղթել: Այս հաղթությունը Քրիստոսը խոստանում է մեզ, եթե Իրեն վստահելով՝ մեր կյանքերը հանձնենք Իրեն: Ինչպես լողալ սովորողը, իր առաջնորդի ձեռքերին վստահելով, ծփում է ջրի վրա, այնպես էլ մենք պետք է վստահենք մեր կյանքերը Տեր Հիսուս Քրիստոսին: Բայց արդյո՞ք այսօր չար օրերում հավատացյալը կարող է հաղթական կյանք ունենալ: Աստծո Խոսքը հաստատում է, որ Քրիստոսով հավատացյալները կարող են հաղթական կյանք ունենալ, ինչպես Նոյը, Հոբբը, Հովսեփը, Դանիելը եւ Քրիստոսով ուրիշ շատ սրբեր:

ԴՈՒ ԷԼ ԱՅՍՕՐ ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՂԹԱԿԱՆ ԼԻՆԵԼ՝

- ամբողջովին Քրիստոսին եւ Նրա խոսքերին վստահելով,
- Սուրբ Հոգուն հնազանդ լինելով,
- չսիրելով եւ չմտնվելով աշխարհին,
- հաճախելով Աստվածաշունչը սովորեցնող եկեղեցի,
- հավատացյալների հետ մտերմիկ հարաբերություններ ստեղծելով,
- անհատապես սերտելով Աստվածաշունչը եւ մասնակցելով խմբակային սերտողություններին,
- բարի պատերազմը ամեն օր պատերազմելով,
- մեղքից հեռու փախչելով:

Միլիոնավոր հավատացյալներ այս բարի պատերազմի մեջ են եւ Քրիստոսով՝ հաղթական: Դու էլ կարող ես հաղթող լինել՝ միայն Տեր Հիսուսին վստահելով: Եկեք այս նոր տարվա սեմին խոստում տանք, որ Տիրոջ լույսով պիտի քայլենք եւ ապաշխարությամբ զոջման գալով՝ Նրա ճամփաներին պիտի հետևենք:

Հրաչ Գույումճյան

Այցելություն հայրենիք

Փ առք են տալիս Աստծուն, որ մեկ անգամ ես առիթ տվեց ինձ այս տարվա հունվարին այցելել Հայաստան եւ Արցախ: Չայցելեցի վայելելու գարնան անուշ օդը, համտեսելու քաղցրահամ մրգերը, շրջելու գեղեցիկ դաշտերով եւ քաղելու գունավոր ծաղիկներ, չայցելեցի տեսնելու Երեւանի գեղեցիկ ու լուսավոր հրապարակը, շքեղ տներն ու հյուրանոցները: Ես եկա փնտրելու, մխիթարելու եւ աղոթելու նրանց համար, ովքեր զրկված են այս բոլոր բարիքներից: Եվ ինչքա՛ն մեծ ցավ էր տեսնել, որ նրանց թիվը բավականին շատ է:

Արցախում տները զրկված էին վազող ջրից եւ շատ ընտանիքներ՝ հավաքված փոքր սենյակում, փորձում էին իրենց տաք պահել: Կային ուրիշներ էլ, որոնք, իրենց փոքրիկներին փաթաթված, պառկում էին, որպեսզի միմյանց տաք պահեն: Ես, ականատես լինելով, աղոթում էի, որ Տերը պահապան լինի նրանց:

Այս բոլորի հետ հանդերձ նրանց մեջ գտա մի հոգեւոր տաքություն, որից մենք մեր տաք երկրներում զուրկ ենք: Սեր հայրենիքի հավատացյալները՝ նրանք, ովքեր լուսավորված են Քրիստոսի սիրով եւ Նրա Հոգով, բուրում են անհավատալի բույրով, ինչը իսկապես ինձ շատ քաջալերել է եւ լցրել մեծ ուրախությամբ: Փառք են տալիս Աստծուն այն բարի ծառայությունների համար, որ շատերը կատարում են ծանր պայմաններում: Սենք էլ աղոթքով կմնանք ձեր թիկունքում:

- Քրիստոսով քաջալերում են ձեզ, որ իրար մեծ սիրով սիրեք, որ կարողություն ունենաք հարթել չարի նետերին:
- Նրա Հոգին միաբանում է մեզ ու չի բաժանում: Հաստատ մնացեք ձեր միաբանության մեջ՝ ամեն գին վճարելով:
- Չեր կոչման մեջ հաստատ մնացեք: Նրանք, ովքեր հավատարիմ եւ մինչեւ վերջ մնան, պսակի պիտի արժանանան:
- Կարողացեք Աստծո խոսքը եւ ապրե՛ք աստվածահաճո կյանք՝ փառք բերելով Աստծուն եւ մեղքից հեռու փախչելով:
- Ապա Տիրոջով որոշում կայացրեք, որ հանեք ձեր վրայից հին մարդը եւ հագնեք նորը՝ Քրիստոսով:

Հրաչ Գույունյան

Փոխված կյանքեր

Աշխարհում բոլորս երջանիկ ապրելու կարիք ունենք: Մենք հազարավոր միջոցների ենք դիմում՝ հասնելու այդ երջանկությանը: Բազում միջոցներ է առաջարկում մեզ աշխարհը: Ես նույնպես փնտրում էի, ճրգտում էի օգտվել այդ միջոցներից: Եթե չէի բավարարվում, ձգտում էի ինքս ստեղծել այդ միջոցները, որ լցնեմ այդ դատարկությունը, որ տարածվում էր իմ հոգում տարեցտարի, ժամ առ ժամ... Մտածում էի, որ այն, ինչ հաճելի էր իմ սրտին ու մտքին, դրանով էլ պիտի շնչեմ ու ապրեմ: Միբայն էլ ժամերով լսել երաժշտություն, ձգտում էի գեղեցիկ հագնվել կամ պարզապես ընկերներ ունենալ եւ շատ այլ բաներ, որոնց մեջ ուզում էի գտնել ինքս ինձ՝ մտորելով, որ այդպես հաստատ երջանիկ կլինեմ:

Ստացվեց այնպես, որ կարծես թե փնտրտուքի ճանապարհը տանում էր դեպի իմ «ես»-ը, որը ուզում էր ընկալել աշխարհի առաջարկած երջանկությունը: Որքան վերցնում էի այդ առաջարկից, այնքան քայքայվում էր «ես»-իս մեջ ապրող հոգին, ծվատվում էր մասերի: Կարծես ինձ անընդհատ ստում են ու ստում, խաբվում էի եւ հուսահատվում: Ավելի էի մեղքեր գործում, գոռոզանում, ստում, վիրավորվում: Վերջապես, փորձելով այդ ամենից առանձնանալ, հասա ոչ թե երջանկության, այլ խորը միայնության: Բոլոր մարդիկ՝ շատ թե քիչ, այդպես են խաբվում աշխարհի առաջարկած երջանկությունից եւ հորինում են իրենց համար տարբերակ՝ ասելով, որ երջանկություն չկա, կան միայն երջանիկ պահեր:

Որքան ենք ուզում ինքներս մեզ վերջապես ասել. «Երանի ինձ»: Իսկ ինչպե՞ս գտնենք, որտե՞ղ փնտրենք: Երբ Աստված ասում է փնտրեք եւ կգտնեք, ապա պիտի հասկանանք, ինչ ենք փնտրում եւ որտեղ: Աստված միանշանակ պատասխանում է. «Երանի նրանց, որոնց անօրենությունը թողվեցավ եւ որոնց մեղքերը ծածկվեցան» (Մաղ. 32:1): Ասել է թե փնտրել երջանկություն նշանակում է փնտրել մեղքերի թողություն: Չէ՞ որ Խոսքն ասում է. «Երանի նրանց...»: Ես վերջապես հասկացա, որ երջանկության բանալին մեղքերից ազատվելու ուրախության մեջ է:

Չորս տարի առաջ գտա Հիսուսին, եւ հասկանալով, որ Նրան էի փրկորում, օրագրիս մեջ գրեցի. «Փրկության ձյունից ճերմակ զգեստ հագա, եւ հոգիս՝ նորածին եւ ջինջ կաթնակեր, ճախրում է... Փառք Քեզ, իմ Աստված, իմ Հիսուս, իմ ապավեն ու Փրկիչ»:

Լիանա Սկոյան

Խնդիրներ, որոնց բախվում են երեխաները Հարձակումներ Աստծո Խոսքի վրա

Սա այն է, ինչ սատանան առաջին անգամ օգտագործեց, որպեսզի խաբի Եվային Եդեմի պարտեզում: Նա փորձեց կասկած հարուցել Աստծո Խոսքի հեղինակության դեմ: Այսօր մենք հանդիպում ենք այսպիսի արտահայտությունների. «Այն, ինչ պատահում է կյանքում, ոչ միշտ է համապատասխանում Աստվածաշնչին», «Կան որոշ սխալներ եւ հակասություններ Աստվածաշնչում»: Ոմանց համար Աստվածաշունչը հնացել է, քանի որ մարդկությունը շատ առաջ է անցել: Բայց Աստվածաշունչըն այսօր ամենաշատ կարդացվող գիրքն է աշխարհում, այն թարգմանված է ավելի շատ լեզուներով, քան որեւէ մեկ ուրիշ գիրք: Ովքեր չեն հավատում Աստվածաշնչին, Տեր Հիսուս Քրիստոսը նրանց մասին ասել է. «Ո՛վ անմիտներ ու թուլասիրտներ, որպեսզի հավատաք այն բոլոր բաներին, որ մարգարեները խոսեցին» (Դուկ. 24:25):

Ինչպե՞ս է Տերը պատասխանում նմանատիպ հարձակումներին: Տեր Հիսուսն ասել է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնեն, օրենքից մի կետ կամ մի փոքր նշանագիր անգամ չի անցնի, մինչ որ ամենը չկատարվի: Արդ ով որ այս ամենափոքր պատվիրաններից մեկը քանդի ու մարդկանց այդպես սովորեցնի, նա երկնքի արքայությունում ամենափոքրը կկոչվի: Բայց նա, ով կկատարի ու կսովորեցնի, նա երկնքի արքայությունում մեծ կկոչվի» (Մատթ. 5:18-19):

Չկա այդպիսի մարդ, որը կարողանա ապացուցել, որ Գրվածքներում թեկուզ մեկ սխալ կա: «Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է...» (Բ Տիմ. 3:16): Աստվածաշնչի միջոցով Աստծո կողմից մարդկանց տրված հայտնությունը ավարտված է: Ինքը՝ Սուրբ Հոգին է ղեկավարել Աստվածաշունչը գրողներին: Ողջ Աստվածաշունչը ճշմարտություն է սկզբից մինչեւ վերջ, հավիտենական ճշմարտություն: Նրա հեղինակությունը բացարձակ է, այն բարձրագույն է ու վերջնական:

Սիրելի՛ ուսուցիչ, դու կանչված ես մանուկներին փոխանցելու Աստծո կատարյալ Խոսքը, որը կարող է փոխել նրանց կյանքը:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Այս բանը Ինձնից է

Կյանքի ընթացքում հանդիպում ենք տարբեր պարագաների, եւ երբեմն մեզ թվում է, թէ Աստված մեզնով հետաքրքրված չէ: Երբեմն պարզապէս ուզում ենք բացական չել. «Տէր, ինչո՞ւ ինձ այս կետին հասցրիր: Ինչո՞ւ ինձ հետ այս բանը պատահեց: Ինչո՞ւ հիմա պատահեց»:

Մենք՝ որպէս մարդ արարածներ, միայն հորիզոնական կարող ենք տեսնել: Ներությունների ընթացքում մեր դիմացի հսկա պատն ենք տեսնում եւ հուսահատվում ենք: Սակայն Աստված վերեւից է նայում: Նա գիտի ճանապարհի դարձվածքները, Նա գիտի ազատման միջոցը: Աստված մեզ նայում է սիրո աչքերով եւ գուրգուրող հոր նման հետեւում է մեր կյանքի ընթացքին:

«Երբ հանդիպում ես փորձությունների ու թշնամին քո շուրջն է, ուզում եմ՝ իմանաս, որ Ես այդ բանը արտոնեցի: Այս բանը Ինձնից է, որպէսզի սովորես, որ դու տկար ես, եւ Իմ գործոյան կարիքն ունես:

Նյութական դժվարութիւնն ունես, վճարումներդ չե՞ս կարողանում հասցնել վճարել: Այս բանը Ինձնից է: Քո գանձանակը Իմ ձեռքերում է, ուզում եմ, որ Ինձ վստահես ու Ինձնից ուզես կարիքներդ: Ես քո յուրաքանչյուր կարիքը կարող եմ լրացնել (Փիլիպպ. 4:19):

Դժվար պայմանների մե՞ջ ես, շրջապատված ես մարդկանցով, որոնք քեզ չե՞ն հասկանում ու քեզ անտեսո՞ւմ են: Այս բանը Ինձնից է: Պատահական չէ, որ դու այդտեղ ես, Ես քեզ դրեցի այդ պայմանների մեջ: Մի՞թէ Ինձնից չէիր խնդրել, որ քեզ խոնարհ պահեմ, ուրեմն Ես քեզ ճիշտ այն դպրոցի մեջ եմ դրել, որտեղ խոնարհություն են սովորեցնում:

Վշտերի մե՞ջ ես: Այս բանը Ինձնից է: Ես «վշտերի տեր ու ցավերի տեղյակ» եմ եղել, Ես գիտեմ, որ աշխարհի տված մխիթարությունը քեզ չի մխիթարի: Այդ ժամանակ դու կդիմես Ինձ՝ հավիտենական մխիթարություն ստանալու համար (Բ Թեա. 2:15,16):

Ընկերդ, որին դու վստահում էիր եւ որի առջեւ բացում էիր սիրտդ, քեզ հուսախա՞ր է արել: Այս բանը Ինձնից է: Ես արտոնեցի, որ այս հուսախաբարությունը ունենաս, որպէսզի սովորես, որ Ես եմ քո լավագույն ընկերը: Ես ուզում եմ լինել այն անձը, որի մոտ կգնաս սիրտդ բացելու համար: Պատմի՛ր Ինձ քո ցավերը, քո նեղությունները, քո հասցեին աս-

ված սխալ գրպարտությունները ու Ինձ վստահիր: Մտեցիր Ինձ, թող որ Ես լինեմ քո հույսն ու ապաստարանը: Թող որ Ես «քո արդարությունը դուրս հանեմ լույսի պես, եւ քո իրավունքը ինչպես մեծ անդունդ» (Սաղ. 37:6):

Ծրագրերդ ձախողվե՞լ են, մտահոգվա՞ծ ես: Այս բանը Ինձնից է: Դու ծրագրեցիր առանց Ինձ հարցնելու: Դու նախ ծրագրեցիր, հետո եկար Ինձ խնդրելու, որ օրհնեմ ծրագրերդ: Ես ուզում եմ, որ նախ Ինձ դիմես եւ թույլ տաս, որ Ես ծրագրեմ քեզ համար: Այն ժամանակ բոլոր պատասխանատվությունը Իմը կլինի, ու Ես քո կարողացածից ավելին չեմ տա քեզ:

Ցանկանում էիր Ինձ համար մեծ գործեր անել, բայց հիմա տկար ու անկողնու մե՞ջ ես: Այս բանը Ինձնից է: Զո առողջ շրջանում երբեք ժամանակ չունեիր Ինձ հետ մտերմանալու ու Ինձնից սովորելու: Գիտե՞ս, որ Ինձ նվիրված ծառաների մեջ լավագույններից են նրանք, ովքեր այլևս չեն կարող ֆիզիկապես գործունյա լինել, հապա քաջաբար եւ հավատարմորեն միշտ բարձր են պահում աղոթքի զենքը:

Այսօր քո ձեռքերի մեջ եմ դնում նոր ակնոց: Թող որ քեզ նեղացնող պարագաները, քեզ ցավ պատճառող խոսքերը եւ քեզ անհամբեր դարձնող ընդմիջումները նոր ակնոցով դիտես: Այն ժամանակ դժվարությունների խայթոցը թեթեւ պիտի լինի, մինչեւ որ սովորես Ինձ տեսնել նրանց մեջ, մինչեւ որ սովորես, որ «այս բանը Ինձնից է»»:



«Տե՛ր, Դու թույլ տվեցիր այս բանը իմ կյանքում: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ: Բայց գիտեմ, որ դա չէր կարող պատահել, եթե Դու չարտոնեիր: Ուրեմն օգնիր ինձ, որ պարագաներիս նայեմ նոր ակնոցով: Օգնիր ինձ, որ միշտ հիշեմ, որ այս բանը Զեզնից եղավ, որովհետեւ Դու ինձ համար բարի նպատակ ունես: Ամեն»:

«Բայց գիտեմ, որ Աստծուն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում նրանց բարիքի համար...» (Հռոմ. 8:28):

Մյուզան Խաչոյան

Աստծո սպառազինությունը (մաս 3)

Եփեսացիներին 6:15-18

Այս դասընթացում շարունակում ենք սերտել Եփեսացիների 6-րդ գլխում նշված Աստծո սպառազինության մասին: Հաջորդ երկու բաները, որոնք նշված են այս հատվածում, հավատացյալի հոգեւոր կյանքի համար մեծ կարեւորություն ունեցող նյութեր են: Առաջինը «խաղաղության Ավետարան»-ն է (15-րդ համար):

Երբ սերտում ենք Աստվածաշունչը, տեսնում ենք, որ շատ հաճախ հոգեւոր ճշմարտությունները լուսաբանելու համար օգտագործվում են ֆիզիկական բաներ, օրինակ՝ մեր ոտքերը: Հովհաննես 13-րդ գլխում ոտքերը մեր այս աշխարհի հետ ունեցած շփման խորհրդապատկերն են: Ինչպես որ մեր ոտքերը կեղտոտվում են ճանապարհների փոշուց, նույնպես հոգեւորապես մենք շատ հեշտությամբ կարող ենք կեղտոտվել եւ վարակվել այս աշխարհի մեղքերից:

Ա Պետ. 2:11-ում Պետրոսը քրիստոնյաներին կոչում է «պանդուխտներ եւ օտարականներ այս երկրի վրա»: Եկեք պատկերացնենք մի խումբ պանդուխտների, որոնք ճամփորդում են դեպի հեռու երկիր: Նրանք քայլում են օտար եւ խորթ ճանապարհներով եւ այդ օտար ճանապարհների վրայով պետք է հասնեն իրենց ուզած երկիրը: Նրանք հետաքրքրված չեն այն օտար երկրներով, որոնց միջով անցնում են: Նրանց հետաքրքրությունը այն երկիրն է, որին ուզում են հասնել: Մինչ քայլում են, նրանց ոտքերը կպչում են այդ օտար երկրների փոշուն եւ կեղտին: Արդյոք սա նման չէ՞ քրիստոնյայի հոգեւոր կյանքին:

Աստվածաշունչը մեզ ասում է, որ մենք պանդուխտներ եւ օտարականներ ենք: Աշխարհը մեր տունը չէ: Մեր տունը երկինքն է, որտեղ մեր «քաղաքացիությունն» է: Սակայն մինչ մենք ապրում ենք այս երկրի վրա եւ կատարում ենք մեր առօրյա գործունեությունը՝ աշխատանք, դպրոց, համալսարան, եւ շփվում ենք աշխարհի մարդկանց հետ, մեզ համար շատ հեշտ է կեղտոտվել այս զբաղմունքների եւ գործունեությունների ընթացքում:

Ուրեմն, սա մեզ հանգեցնում է մի կարեւոր հարցի: Որքանո՞վ է ջերմ քո հարաբերությունը այս աշխարհի հետ, որքանո՞վ է մտերիմ քո շփումը այս աշխարհի հետ: Արդյո՞ք դու ազդում ես աշխարհի վրա Քրիստոսի մասին իմացածովդ, թե՞ աշխարհն է ազդում քեզ վրա:

Եփեսացիներին 6:15-ում մեզ ասվում է, որ «խաղաղության Ավետարանը» ունենանք մեր ոտքերին: Սա նշանակում է, որ մեր բոլոր հարաբերությունները եւ շփումները այս աշխարհի հետ պետք է լինեն Քրիստոսի Ավետարանի շուրջ, որը մեզ այսքան մեծ օրհնություն բերեց: Ուրիշ խոսքով, յուրաքանչյուր գործ, միտք կամ խոսք, որ ասում ենք, պետք է շահախափված լինի Քրիստոսի օրհնյալ Ավետարանի գիտությամբ: Եթե այսպես վարվենք մեր բոլոր հարաբերություններում, ի՞նչ մեծ փոփոխություն պիտի լինի մեր կյանքերում:

Եթե ոտքերդ սովորել են կոշիկ հագնելուն, ասյա երբ մի օր փորձես կոշիկներդ հանել եւ բռբիկ քայլել քարքարոտ գետնի վրա, ոտքերդ շատ շուտ պիտի զգան կոշտ քարերը եւ բնականաբար պիտի ցավեն: Մեր ոտքերը շատ զգայուն են: Մենք կարիք ունենք մեր ոտքերը պաշտպանելու:

Պատկերացրու մի զինվոր, որ պատերազմի է գնում առանց կոշիկների: Իմ կարծիքով, նա անմիտ զինվոր պետք է որ լինի, որը հարմար չէ պատերազմի համար: Արդյո՞ք մենք գնում ենք այս աշխարհ՝ մոռանալով պաշտպանել մեր ոտքերը, արդյո՞ք աշխարհի հետ մեր հարաբերություններում մենք մոռանում ենք Ավետարանը եւ նրա միջոցով կատարված մեծ փոփոխությունը մեր կյանքերում: Արդյո՞ք հիշում ենք, որ մենք դուրս ենք բերվել խավարից եւ լույսի մեջ ենք եւ որ մեր կյանքերը փոխված են:

Եփեսացիներին 6:16-ում կարդում ենք «Հոգու սրի» մասին: Այն Աստծո կողմից մեզ տրված սպառազինության միակ զենքն է, որ թե՛ հարձակվողական եւ թե՛ պաշտպանողական է: Երբ «Հոգու սուր» բառակապակցությունը իրարից անջատում ենք, մենք հասկանում ենք դրա կարեւորությունը: Սուրը հարձակվողական եւ պաշտպանողական զենք է: Հոգին Նա է, ով օգտագործում է այս զենքը մեր կյանքերում: Դա մեզ տրված միակ բանն է, որով պիտի պատերազմենք, եւ դա Աստծո Խոսքն է: Շատ էական է հասկանալ այս զենքի յուրահատկությունը մեր զինամթերքում: Քրիստոնեական կյանքում հաջողության հասնելու գլխավոր բանալիներից մեկն է այս զենքի ճիշտ օգտագործումը: Այն չօգտագործելը կամ սրխալ օգտագործելը միանշանակ մեզ պարտության պիտի մատնի:

Սաղմոս 119-ում գրեթե յուրաքանչյուր համար խոսում է Տիրոջ օրենքի մասին: Մտածիր հետեւյալ երկու համարների շուրջ ու կտեսնես, թե ինչու է «Հոգու սուրը» շատ կարեւոր քեզ համար: «Երիտասարդը ինչով մաքրի իր ճամբան, քո խոսքի համեմատ նրան զգուշություն անելով» (Սաղ. 119: 9): «Իմ սրտումը թագորի քո խոսքերը, որ չմեղանչեմ քեզ դեմ» (Սաղ. 119: 11): Սրանք միայն երկու համարներ են, որոնք ցույց են տալիս, թե «Հոգու սուրը» ինչքան կարեւոր է քեզ համար: Կան նաեւ ուրիշ շատ համարներ:

Մեքյու Հիլլեր (շարունակելի)

Միացան Աստծո վրանի տակ

Ծննդոց 18:1-15

Ռարերի ընթացքում վրանը ապահովություն է սեփականություն էր նշանակում: Վրանի հովանու տակ հոգնած ճամփորդը հանգիստ էր գտնում, պաշտպանվում էր ցերեկվա կիզիչ տաքությունից ու զիջերվա սառնաշունչ ցրտից: Սաղմոսերգուն ասում է. «Չար օրումը նա ծածկում է ինձ իր խորանի մեջ. նա թաքցնում է ինձ իր խորանի ծածուկ տեղումը» (Սաղ. 27:5): «Որովհետև գիտենք, - գրում է Պողոս առաքյալը, - որ եթե մեր երկրային տունը՝ այս վրանը, քանդվի, Աստծուց մի բնակավայր ունենք՝ անձեռագործ մի տուն, որ հավիտենական է երկնքում» (Բ Կորնթ. 5:1): Այս խոսքերից հստակ իմանում ենք, որ մեր՝ այստեղ ունեցածը ժամանակավոր են, իսկ երկնայինը՝ ճշմարիտ ու հավիտենական: Արբահամն էլ վրանների մեջ բնակվեց: «Որովհետև սպասում էր այն հիմքով հաստատված քաղաքին, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է» (Եբրայեցիներին 11:10):

Նա շատ լավ ըմբռնել էր այս ճշմարտությունները: Այդ շոգ օրը, երբ արևի ճառագայթները նետածիզ ուժգնությամբ հարվածում էին Մամբրեի հսկա կաղնու, որի շուքի տակ հայր Արբահամը, իր վրանի դռան առջև նստած, անհամբերությամբ սպասում էր մեղմ զեփյուռի զգվանքին, հանկարծ, ի զարմանս իրեն, տեսավ երեք մարդ, որոնք կանգնել էին իր մոտ: Նա արագ վազեց նրանց դիմավորելու և մինչև գետին խոնարհվեց ու ասաց. «Տե՛ր, եթե շնորհք գտա քո առաջին, աղաչում եմ քեզ, քո ծառայիցը մի անցնիք»:

Ովքե՞ր էին այս այցելուները, որոնց Արբահամը խոնարհվեց և տեր կոչեց: Տերն էր: Նա եկել էր՝ օրհնությամբ լիքը ձեռքերով Արբահամի ու Սառայի թախանձագին աղոթքին սլատասխանելու, անկարելի կարելի դարձնելու, խոստացյալ մանկան՝ Իսահակի ծնունդը ավետելու, որի սերնդից պիտի ծնվեր Քրիստոսը՝ աշխարհի Փրկիչը:

Տիրոջ՝ Արբահամի վրան այցելությունը կիզիչ արևը գարնան հոտավետ զեփյուռի վերածեց, հավատքը՝ տեսության, քանի որ Տերն ասաց. «Եկող տարի կրկին քեզ մոտ կգամ. և ահա քո կինը Սառան մի որդի կունենա» (Ծննդ. 18:10): Սառան վրանի հետեի կողմից լսում էր նրանց խոսակցությունը: «Եվ Սառան իր մտքումը ծիծաղեց ասելով. «Ես պառավելիցս հետո եմ զվարճությո՞ւն ունենալու, և տերս էլ ծերացած է՞»»:

Սառան իր մտքում ծիծաղեց եւ խոսեց՝ խորհելով, որ ոչ ոք չտեսավ, բայց Աստված տեսավ եւ լսեց ու Աբրահամին ասաց. «Սառան ինչո՞ւ ծիծաղեց ասելով, Մի՞թե եւ իրավ ծնելու եմ, որ պառավել եմ. Եհովայի համար դժվար բան կա՞ արդո՞ք»: Ամենատես Աստվածը տեսնում է անտեսանելին, քննում է գաղտնի խորհուրդները եւ շարժառիթները:

Սակայն Տիրոջ հանդիմանությունը Սառայի կյանքում ինչ ազդեցություն ունեցավ, որքան չքմեղանք, որքան Աստծո ուզածի պես տրամուրջուն, որ ասյաշխարհայան է առաջնորդում, որի միջոցով Սառայի անհավատությունը հավատքի վերածվեց: Եբրայեցիներին 11:11-ում կարդում ենք, որ «Հավատով Սառան ինքն էլ սերմն ընդունելու գործություն ստացավ եւ առաջացած հասակում որդի ծնեց»:

Այո՛, ճիշտ մեկ տարի հետո՝ որոշված ժամանակին, Աբրահամի եւ Սառայի վրանը ուրախությամբ եւ ցնծությամբ լցվեց, քանի որ ծնվեց Իսահակը, որ թարգմանաբար նշանակում է խնդություն: Այն վրանը ուր հրավիրվում է Տերը, հրավիրվում են հավատքը եւ խնդությունը, այդ վրանում սխալը հանդիմանվում է, ծուռը շտկվում է, անմիաբանությունը վերածվում է միաբանության, թշնամությունը վերջ է գտնում, եւ տիրում է խաղաղությունը:

Աստվածաշունչն ասում է. «Եվ նա (Տերը) վրան կդառնա ցեղերը հովանի տալու համար տաքության դեմ, եւ ասպաստանարան ու ծածկոց՝ մրրիկի եւ անձրեւի դեմ» (Եսայեայ 4:6): Նրա վրանը հոգնած պանդուխտի հանգստավայրն է, միայնակի անբաժանելի ընկերը, հուսալքված մեղավորի օրինյալ փրկիչը:

Մարի Գույումճյան Գասարճյան

Ընթերցողների վկայություններ



Կարծում եմ, որ «Ազդարարության փող» թերթը իր տարաբնույթ ու բազմապիսի Նյութերով ոչ միայն հետաքրքիր կլինի յուրաքանչյուր հավատացյալի հոգեւոր աճի, այլեւ կյանքի ընթացքի ու գործունեության համար: Ամեն անգամ թերթը Նորովի ու թարմացած է Ներկայանում ընթերցողին, որն էլ Նոր լիցք ու քաջալերություն է հաղորդում մեզ:

Ի. Խաչատրյան, Երեւան

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԴԱՍԵՆԹԱՑ
10 ՄԱՍԻՑ



ՄԱՍ 7

**Հավատացյալի արտոնությունները եւ
պատասխանատվությունը**

Ա) ԱՍՏՈՒ ՋԱՎԱԿԸ

Աստծո զավակը վերստին ծնված է՝ «վերեւից ծնված»։ Ինչպես մեր բնական ծնունդը մեզ դարձնում է մի ընտանիքի անդամ, այնպես էլ վերստին ծննդով դառնում ենք Աստծո ընտանիքի անդամ։ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը եւ Հայրը դառնում է մեր Հայրը։ Մենք Նրա զավակներն ենք՝ Աստծո զավակները։ Կարդում ենք. «Մենք հիմա Աստծո որդիներն ենք» (Թուրք Հռոմեացիներին 8:15-16 եւ 1-ին թուրք Հովհաննեսի 3:1-2):

1. Մարդը ինչպե՞ս է Աստծո զավակը դառնում:

Ավետարան ըստ Հովհաննեսի 1:9-18

Ա) Ո՞վ եկավ այս աշխարհ:

Բ) Ի՞նչ պետք է անեն Աստծո զավակը դառնալու համար:

2. Աստծո զավակը հիմա՞ եմ դառնալու, թե՞ ապագայում:

Առաջին թուրք Հովհաննեսի 3:2-ի սկիզբը:

3. Ի՞նչ է կոչվում այն գիրքը, որտեղ գրված են Աստծո բոլոր զավակների անունները: Թուղթ Փիլիպպեցիներին 4:3 եւ Հայտնություն 20:15

4. Աստված ուրիշ ո՞ւմ է սիրում Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի նման: Ավետարան ըստ Հովհաննեսի 17:20-23:

Բ) ԱՂՈԹՔ

1. Փոքր երեխան իր ծնողներին է դիմում իր բոլոր կարիքների համար, իսկ Աստծո զավակը ի՞նչ կարող է անել իր կյանքի հոգսերի համար: Թուղթ Փիլիպպեցիներին 4:6-ի սկիզբը

2. Տեր Հիսուս Քրիստոսը ի՞նչ հրավեր տվեց Հովհաննու Ավետարանում, 16-րդ գլխում, 24-րդ համարում:

3. Ու՞մ պետք է աղոթենք: Ավետարան ըստ Հովհաննեսի 16:23

4. Ինչպե՞ս պետք է խնդրենք: Թուղթ Հակոբոսի 1:6

5. Ու՞մ անունով պետք է խնդրենք: Ավետարան ըստ Հովհաննեսի 15:16 եւ 16:23

6. Մեր աղոթքները ինչու՞ միշտ չեն պատասխանվում մեր ուզած ձեով: Թուղթ Հակոբոսի 4:3

7. Եթե Աստծո կամքի համաձայն խնդրենք, ի՞նչ կարող ենք ստույգ իմանալ: Առաջին թուղթ Հովհաննեսի 5:14-15

Ա) _____
Բ) _____

8. Թուղթ Եբրայեցիներին 4:16-ում ինչի՞ն ենք հրավիրված:

Բ) ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ պետք է ավելացնենք մեր հավատին:

Երկրորդ թուղթ Պետրոսի 1: 5-7

2. Հետեյալ համարում Պետրոս առաքյալը ի՞նչ հրահանգ է տալիս հավատացյալներին: Երկրորդ թուղթ Պետրոսի 3:18

3. Աստծո զավակը պետք է սնվի Աստծո Խոսքով, որպեսզի աճի եւ Աստծո կամքը ճանաչի: Արտագրե՞ք, թե Աստծո Խոսքը ի՞նչ բաների համար է օգտակար: Երկրորդ թուղթ Տիմոթեոսին 3:16

ա) _____

բ) _____

գ) _____

դ) _____

4. Խոսքը լսող լինելուց բացի, ուրիշ ի՞նչ պետք է լինենք:

Թուղթ Հակոբոսի 1:22-23

5. Հավատալուց հետո ի՞նչ պետք է անես:

Գործք Առաքելոց 8:37-38, եւ 18:18 (վերջին մաս)

6. Ի՞նչ ասաց Տեր Հիսուսը, որ կաատառի աշակերտներին, եւ նրանք ի՞նչ պիտի անեին: Գործք Առաքելոց 1:8

7. Հավատացյալները ի՞նչ պետք է լինեն Քրիստոսի համար:

Երկրորդ թուղթ Կորնթացիներին 5:20

8. Թեսաղոնիկեի հավատացյալներն ի՞նչ արեցին:


Առաջին թուղթ Թեսաղոնիկեցիներին 1: 9-10

Կարող եք Ձեր հարցերը գրել այստեղ:

Անհրաժեշտության դեպքում վերցրե՛ք նոր թերթ:

**Վերադարձրե՛ք հետևյալ
հասցեով՝**

**TRUMPET SOUND
PO BOX 1593
CHATSWOOD NSW 2057
AUSTRALIA**

 Խնդրում ենք հասկանալի գրել՝

ԱՆՈՒՆ: _____

ՀԱՍՑԵ: _____

ԵՐԿԻՐ: _____

**Եթե 18 տարեկանից փոքր եք, գրե՛ք ձեր
ծննդյան թիվը:**

	<p>ENGLISH BIBLE COURSE FORMATTED PART 7 07/03 © 1995 English Edition Bible Distributors, London United Kingdom © 2003 Russian, German & Romanian Editions Bible & Literature Distributors, PO Box 707, Epping NSW 1710, Australia</p>
--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Մեղավոր են ծնունդո՞վ, թե՞ ստեղծումով

Շատ հաճախ մարդիկ իրենց արարքները արդարացնելու համար ասում են. «Աստված ինձ այսպես ստեղծեց, թող այսպես չստեղծեր, եւ ամեն ինչ լավ կլիներ»: Կարծես ուզում ենք հանցանքն Աստծո վրա նետել. Ինքն է մեզ այսպիսին ստեղծողը, ուրեմն Ինքն էլ թող ուղղի մեզ: Երբեմն էլ հանցանքն ուզում ենք սատանայի վրա նետել ու ասում ենք. «Թող Աստված սատանային կործանի, եւ բոլոր խնդիրները միանգամից կլուծվեն»:

Երբ ասում ենք. «Ես այսպես եմ ստեղծվել», կարծես թե ակամայից Աստծուն ենք մատնանշում, ու մեր ցուցամատը Նրա վրա շարժելով՝ ասում ենք. «Ինչո՞ւ ես այսպիսին ստեղծել ինձ: Դո՛ւ արեցիր, Դո՛ւ էլ քաշիր»: Մենք վարպետ ենք հանցանքը ուրիշի վրա նետելու մեջ: Ադամն ասաց. «Այն կինը, որ ինձ հետ տվիր, նա տվավ ինձ այն ծառիցը, եւ ես կերա» (Ծննդոց 3:12): Եթե համարը ուշադիր կարդանք, Ադամը ոչ միայն կնոջ վրա նետեց հանցանքը, այլեւ միաժամանակ մեղադրեց նաեւ Աստծուն: Ադամն իր խոսքերը կարող էր այսպես շարադրել. «Այս կինը ինձ տվեց ու ես կերա»: Բայց տեսնում ենք, որ նա մեղադրում է Աստծուն՝ ասելով. «Այն կինը, որ ինձ հետ տվիր...»: Ուրիշ խոսքով Ադամը Աստծուն ասում էր, որ Քո տված կինը ինձ տվեց ու ես կերա. ես այդքան էլ մեղք չունեմ: Եվան էլ իր հերթին օձի վրա նետեց հանցանքը՝ ասելով. «Օձն ինձ խաբեց, եւ ես կերա»: Մի՞թե նույն պատկերը չի կրկնվում այսօր. կա՛մ Աստծուն ենք մեղավոր հանում, կա՛մ էլ՝ սատանային: Բայց արդյո՞ք այդպես անելով Ադամը եւ Եվան արդարացան: Բոլորովին ո՛չ:

Աստված ոչ մեկին մեղավոր (մեղքի բնույթով) չստեղծեց: Աստված ոչ մի բան չար չի ստեղծել, Նրա յուրաքանչյուր ստեղծածը բարի է: Աստված նույնիսկ սատանային սատանա չստեղծեց: Նա հրեշտակապետ էր, որը հետո սատանա դարձավ, էլ ո՞ր մնաց մեզ ստեղծեր որպես մեղավորներ: Աստված միայն Ադամին ու Եվային ստեղծեց, գետնի հողից ստեղծեց նրանց: Ադամը եւ Եվան կատարյալ եւ առանց մեղքի ստեղծվեցին, սակայն մեղանշումից հետո նրանց սերունդը մեղքով սկսեց ծնվել: Մինչեւ օրս մարդիկ երեք կերպով են աշխարհ եկել: Առաջինը՝ ստեղծումով, ինչպես Ադամն ու Եվան. միայն այս երկուսն էին, որ ուղղակի ստեղծվեցին Աստծո կողմից, երկրորդը՝ ծնունդով՝ Կայենից ու Հաբելից. մինչեւ օրս հազարավորներ են ծնվում ամեն օր, եւ երրորդը՝ Քրիստոսի ծնունդը, որը թեւ մեզ նման ծնվեց, սակայն առանց մեղքի: Նա աշխարհ եկավ Սուրբ

Հոգու միջոցով: Նա մեղավոր բնույթը չժառանգեց, ինչպես մյուս բոլոր մարդիկ: Նրա մասին գրված է. «Նա մեղք չգործեց, եւ նեմագութիւն չեղավ նրա բերանումը» (Ա Պետ. 2:22):

Դավիթ թագավորը մի անգամ իր մասին ասաց. «Ահա ես անօրենությունով եմ ծնվել, եւ մեղքով հղացավ ինձ իմ մայրը» (Սաղ. 51:5): Դավիթն այս խոսքը չասաց այն իմաստով, որ իր մայրը անբարոյական էր, եւ նա անօրեն ճանապարհով է ծնվել: Ո՛չ, նրա մայրը բարեպաշտ էր, նույնպես եւ հայրը: Դավիթը լավ հասկացել էր այն պարզ ճշմարտությունը, որ շատ մարդիկ այսօր չեն տարբերում. ճշմարտությունն այն է, որ մարդը մեղավոր է ծնունդով, նա աշխարհ է գալիս՝ մեղավոր բնույթը ժառանգած, եւ սրա պատասխանատուն Աստված չէ, այլ մարդը:

Հասկանում եմ ոմանց, որ ասում են. «Բայց ես ինչո՞ւ Ադամի եւ Եվայի մեղքը ժառանգեցի: Ինչո՞ւ մեղավոր ծնվեցի: Ինչո՞ւ ուրիշի մեղքը ինձ հասավ»: Հայերս 1915-ի կոտորածից հետո ցիրուցան եղանք աշխարհով մեկ: Իմ նախնիներս էլ այս կոտորածի զոհ դարձան, եւ իմ պապը գաղթեց ու հաստատվեց Սիրիայի Հալեպ քաղաքում: Այդ օրերին շատ հայեր Հալեպից մեկնեցին Եվրոպա եւ Ամերիկա, բայց իմ պապը նախընտրեց մնալ Հալեպում: Պապիս որոշումից պիտի կախված լիներ ամբողջ գերդաստանի ճակատագիրը: Եթե նա որոշեր ուրիշների նման մեկնել Ամերիկա կամ Եվրոպա, հիմա ես, որ քանի տարի հետո եմ աշխարհ եկել, բոլորովին այլ մարդ պիտի լինեի՝ քաղաքացիությունս, մտածելակերպս, կրթությունս, միատուկացս, ճաշակս...: Ես պապիս որոշման անմիջական արդյունքը քաղողը եղա, թեւ իրենից քանի տասնյակ տարիներ հետո եմ ծնվել: Նմանապես մենք բոլորս Ադամի ու Եվայի մեղքի անմիջական քաղողը եղանք: Նրանց ընտրությունից բոլոր մարդկությունը կախված պիտի լիներ, սակայն դժբախտաբար նրանք ընտրեցին չինազանդվել, եւ այդ ընտրության պատճառով մենք բոլորս մեղավոր բնույթը ժառանգած ենք գալիս այս աշխարհ: Աստվածաշունչն ասում է. «Որովհետեւ ինչպես որ մեկ մարդու անհնազանդությանը շատերը մեղավոր եղան, այնպես էլ մեկի հնազանդությանը շատերը արդար կլինեն» (Հռոմ. 5:19):

Ուրեմն, այսուհետ, երբ մեղք գործես եւ չկարողանաս ուժերովդ ազատվել, մի՛ ասա, թե դու այսպիսին ես ստեղծվել, ասա՛, որ դու այսպիսին ես ծնվել՝ մեղավոր բնույթով: Մեղքը քեզ վրա վերցրու: Բայց բարի լուրն այն է, որ դու կարող ես վերստին ծնունդ ունենալ, եւ այս վերստին ծնունդով դու գործություն պիտի ունենաս մեղքի դեմ կանգնելու եւ կրկին Աստծո հաճությունը ունենալու կյանքիդ մեջ:

Տեր Հիսուսը Նիկողեմոսին ասաց. «Դուք պետք է վերստին ծնվեք»:

Նիկողեմնուր օրենքի հայտնի վարդապետ էր, պատկառելի մարդ իր շքր-ջապատում: Հիսուսը նրան հարգելու նպատակով չէր, որ օգտագործեց հոգնակին, այլ նկատի ուներ բոլոր մարդկությանը. «Դուք պետք է վերըստին ծնվեք»: Ով որ ես, ինչ դիրքի վրա որ ես, երկինք մտնելու համար պետք է վերստին ծնվես: Սուրբ Հոգին է մեղավորին վերստին ծնունդ տրվողը, այն պահին, երբ մարդը կգիտակցի, որ խեղճ մեղավոր է, Աստծո ողորմության կարիքն ունի ու հավատքով ընդունում է Քրիստոսին՝ որպես Փրկչի: Ուրեմն, եկեք դադարենք մեր թերություններն ու հանցանքներն Աստծուն վերագրել, իբր թե Նա է մեզ այդպիսին արարել, ոչ էլ աստանայի վրա նետենք: Այսպես անելով՝ մենք մեզ խաբած կլինենք: Այս վերըստին ծնունդն այնքան սքանչելի է, այնքան գորավոր է, որ փոխում է մարդու սիրտն ու միտքը, այն կարող է հեղաշրջել նրա ամբողջ կյանքը, ինչով նաև նմանեցված է նոր ստեղծվելու հետ: Աստվածաշունչն ասում է. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5:17): Աղոթքս է, որ Տերը հոգուդ աչքերը բացի, ու դու տեսնես մեղավոր վիճակդ ու Աստծո ողորմությունը խնդրես եւ հավատքով Քրիստոսին ընդունես որպես Տեր ու Փրկիչ:

Վարդան Սարգիսյան

Տասը պատվիրանները

6) «Մի սպանիր»:

Մարդկային պատմության առաջին էջերում տեսնում ենք, թե ինչպես Կայենը սպանեց իր եղբորը՝ Հաբելին: Նա երբեք մտադրված չէր իր եղբորը սպանել, ոչ էլ գիտեր, թե ինչ է նշանակում մեռնել, բայց իր ատելությունը այնքան մեծ էր, որ նա հարձակվում է եղբոր վրա ու սպանում նրան:

Երբ մենք տեղ ենք տալիս մեր բարկությանը, չարը շատ շուտ պաշարում է իր խորհուրդներով եւ գործով: Մենք իրավունք չունենք մեր բարկությունը ազատ արձակելու, հապա աղոթքով պետք է կառավարենք եւ պահենք մեր անձերը Սուրբ Հոգու առաջնորդությամբ: Նա, ով սպանում է, անպատիժ չի մնա: «Քո եղբայրը քեզանից պիտի պահանջեմ», - ասում է Տերը:

Երբ Հիսուսին պիտի ձերբակալեին, Պետրոսը շուտով իր սուրը վեր-

ցըրեց եւ քահանայապետի ծառայի ականջը կտրեց: Տերը անմիջապես սաստեց նրան, ծառայի ականջը բժշկեց եւ տեղը դրեց ու Պետրոսին ասաց. «Սուրդ տե՛ղը դիր, որովհետեւ բոլոր սուր վերցնողները սրով պիտի կորչեն» (Մատթ. 26:52):

Նախանձը, անձնասիրությունը, ատելությունը, ազահությունը, բարկությունը մեզ կարող են առաջնորդել դեպի չարի ճամփաները: Բայց Աստված մեզ լիովին ազատություն է խոստանում մեղքից: Դու կարող ես չարի ճիրաններից ազատվել, ինչպես հազարավոր ոճրագործներ աշխարհի չորս կողմերում, որոնք, Քրիստոսով փրկություն ստանալով, նոր մարդիկ են դարձել այսօր: Չկա որեւէ մեղք, որը Քրիստոսը չի կարող ներել, երբ մենք խոստովանում ենք այն: Բայց նրանք, ովքեր մնում են իրենց մեղքերի մեջ, նրանց հավիտենական կորուստ է սպասում. այնտեղ լաց եւ ատամներ կրճտել պիտի լինի:

Երբ ավագակը խաչի վրա ընդունեց իր մեղավոր լինելը եւ ճանաչեց Քրիստոսին՝ ասելով. «Տեր, հիշիր ինձ, երբ քո թագավորությունով գաս», նա անմիջապես թողություն ստացավ իր մեղքերի համար: Աստված քեզ էլ, սիրելի՛ս, կանչում է, որպեսզի ստանաս այդ նույն ազատումը, եթե պատրաստ ես Տիրոջից մեղքերիդ համար թողություն խնդրելու եւ ապաշխարության գալու: Չկա որեւէ մեղք, որ Քրիստոսի քավչարար արյունը չկարողանա սրբել ու մաքրել եւ ձյունից ավելի ճերմակ դարձնել քեզ:

Հրաչ Գույուճյան



Երկնքին պարզված ծառը Բռնիֆացիոս

724 թվականի Ծննդյան նախօրեւ եր: Անբիծ ճերմակության միջով դանդաղ շարժվում էր մարդկանց մի խումբ: Առջեւից քայլում էր Բռնիֆացիոսը՝ նրանց գլխավորը, որի հետքերով շարժվում էին ընկերները, որոնք եկել էին Գերմանիա:

- Ժամանակը չէ՞ արդյոք ճամբար խփել՝ գիշերելու համար, - հարցրեց նրանցից մեկը:

- Ո՛չ, - պատասխանեց Բոնիֆացիոսը: Այս գիշեր մեզ կարելու աշխատանք է սպասում: Չե՞ որ այսօր տոն է: Անտառում բնակվող մարդիկ հավաքվում են հսկայական կաղնու մոտ, որ երկրպագեն իրենց Տոր աստծուն: Նրանք զոհաբերություն են կատարելու: Մենք պետք է շուտ հասնենք այնտեղ, որպեսզի ոչնչացնենք չար ուժը: Ոչ մեծ խումբը շտապեց առաջ շարժվել խոր ձյան միջով: Վերջապես նրանք կարմիր հրացուքի շողեր տեսան:

Հսկա կաղնու առջև բոցավառվում էր խարույկը: Առաջ գալով՝ նրանք տեսան հավաքված բազմաթիվ մարդկանց, որոնք կիսաշրջանաձև նըստած էին խարույկի շուրջը: Նրանց հայացքները երկյուղածությամբ հառած էին սուրբ կաղնու կողմը՝ իրենց «աստծո» առջև: Բոնիֆացիոսն ու նրա ընկերները ավելի մոտ սողացին:

Երկար պարեգոտով կրոնավորը վեր պարզված ձեռքերով կանգնել էր հավաքվածների առջև:

- Այս գիշեր մեռնում է արելը, - կերկերուն ձայնով միալար կրկնում էր նա: Դա խավարի ժամանակ է: Տորը՝ կայծակի ու պատերազմի աստվածը, որն ապրում է այս կաղնու մեջ, ցույց է տալիս, որ չարացած է մեզ վրա: Մեր բերքը փչացավ: Գայլերը հոշոտեցին մեր գառներին: Թշնամին հաղթեց մեզ կովի դաշտում: Մենք նորից պետք է արյունով սնենք Տորի սուրբ ծառի արմատները: Ամբոխի միջից հավանության խուլ գվվոց լըսվեց: Կրոնավորը բարձրացրեց գլուխն ու բացականչեց.

- Տորը ձեզանից պահանջում է, որ զոհաբերեք լավագույնը, ամենաթանկագինը:

Նա մոտեցավ այն տեղին, որտեղ կրակի շուրջը բոլորել էին երեխաները: Կրոնավորը ձեռքերը դրեց փոքրիկ Ասուլֆի գլխին, որը նրանց առաջնորդի որդին էր: Փոքրիկ, շիկահեր, միշտ ուրախ մանուկը ցեղի սիրելին էր:

- Ահա՛ ընտրյալը, - ասաց կրոնավորը, - Միայն նա կարող է ազատել ձեզ մեղքից:

Ասուլֆի հայրն ու մայրը սարսափից քարացան, իսկ հավաքվածների արձակած ձայնը հոգոցի էր նման, երբ կրոնավորը փոքրիկ արքայազն Ասուլֆին տանում էր խարույկի առջև դրված մեծ քարի մոտ:

Բայց այն պահին, երբ կրոնավորը պիտի սպաներ փոքրիկ Ասուլֆին, Բոնիֆացիոսը ետևից ամուր բռնեց նրա ձեռքը:

- Ո՛չ,- բացականչեց Բոնիֆացիոսը, - Ո՛չ. այս գոհն անիմաստ է:

Երկնքի ու երկրի Աստվածը չարացած չէ ձեզ վրա եւ ուղարկել է Իր Որդուն՝ մեռնելու ձեզ համար:

Մարդիկ վեր ցատկեցին: Նրանցից ոմանք այնպես բարկացան, որ ուզում էին սպանել Բոնիֆացիոսին՝ զոհաբերությունն ընդհատելու համար: Ոմանք էլ ուրախությունից բոլորովին կորցրել էին իրենց, քանի որ փոքրիկ արքայազանը փրկվեց:

Տեղի առաջնորդը ընդհատեց աղմուկը:

Մանկանց ավետ. ընկ.
(Շարունակելի)



Մի երգի պատմություն

Ձեռքս բռնէ

1. Առ ձեռքն իմ անգին Տէր, ուղղէ զիս, կանգնէ վեր,
Ձի յոգնած եմ ու տկար ու տխուր:
Մըրիկ է, գիշեր է, ջինջ լոյսի զիս ուղղէ,
Անգին Տէր, առ ձեռքն իմ, տուն հասցուր:
2. Ճամբաս երբ ըլլայ մութ, Դուն եղիր ինձի մօտ,
Կեանքս ալ մօտենայ վախճանին,
Լսէ ձայնս, ձեռքս բռնէ, Պահէ զիս իյնալէ,
Անգին Տէր, հասցուր զիս տուն վերին:

Այս երգի հեղինակն է ամերիկացի սեւամորթ ջազ երաժիշտ Թովմաս Էնդրյու Դորսին (1899-1993): Դորսին այն գրել է 1932 թվականին՝ տխուր դեպքերից հետո: Պատանի հասակից նա սեւամորթների թաղամասերում

խնջույքների եւ հավաքույթների ժամանակ դաշնամուր էր նվագում: Ավելի ուշ սկսեց ջազ երաժշտություն գրել ու նվագել: 1925-ին ամուսնանում է Նեթի Հարփր անունով օրիորդի հետ: Նա 1932-ին հրավեր է ստանում մի եկեղեցու կողմից՝ հաջորդ 40 տարիներին եկեղեցու երգչախմբի ղեկավարը լինելու համար:

1932-ին մի օր նրան հրավիրում են մեներգելու Ս. Լուիս եկեղեցում, որտեղ արթնության ժողովներ պիտի գումարվեին: Նա սկզբից վարանեց ընդունելու հրավերը, քանի որ կինը՝ Նեթին, հղի էր եւ 9-րդ ամսվա մեջ էր: Սակայն կինը համոզում է Թովմասին, որ վերջինս գնա:

Ժողովի երկրորդ օրը, երբ ամբոխը հավաքվել ու լսում էր Թովմասին մեներգելիս, մի մանչ՝ հեռագիրը ձեռքին, մոտենում է ու այն հանձնում է Թովմասին: Բացելով ծրարը՝ կարդում է հետեւյալ բառերը. «Կինդ նոր մահացավ»: Թովմասն իր հուշերում ասում է. «Այդ օրը ինձ համար անհասկանալի օր էր: Մարդիկ եկեղեցում ուրախ էին եւ ծափահարում էին ինձ՝ գեղեցիկ մեներգելուս համար, բայց ես չէի կարողանում զսպել արցունքներս, քանի որ կինս չկար»:

Արագ գնում է տուն եւ իմանում է, որ Նեթին արու զավակ է ծնել: Նա ասում է. «Ես երերում էի խորունկ տխրության եւ երջանկության միջեւ»: Սակայն այդ գիշեր նորածին տղան էլ է մահանում: Ինչպիսի՞ ցավ, ինչպիսի՞ վիշտ, որ մարդը կարող է ապրել: Թովմասը հեռանում է մարդկանցից եւ նույնիսկ երաժշտությունից, որն ինքը շատ էր սիրում: Նա այսպես է գրել. «Զգում էի, որ Աստված անարդար է վարվել ինձ հետ, եւ ես այլևս չէի ուզում Նրան ծառայել եւ հոգեւոր երգեր գրել: Ես ուզեցի ետ դառնալ իմ վաղեմի ջազ երաժշտությանը»:

Այս աներանելի վիճակում էր, երբ մի օր Թովմաս Դորսիի ընկերն այցելում է նրան, եւ այնպես է դասավորվում, որ նրանք մի սենյակ են մըտնում, ուր դաշնամուր կար դրված: Ընկերը Թովմասին մենակ է թողնում այդ սենյակում: Թովմասը երկար ժամանակ էր, ինչ դաշնամուրին չէր մոտեցել, սակայն ցանկանալով թեթեւացնել հոգու վիշտը նստում է դաշնամուրի առջեւ: Այդ պահին Աստված նրա սիրտը մեծ խաղաղությամբ է լցնում ու բժշկում է խռոված հոգին: Նա այսպես է ասում. «Ես խաղաղություն զգացի իմ մեջ, զգացի, որ կարծես հասել եմ Աստծո մոտ եւ Նրան եմ դիպչում: Ես սկսեցի մի երաժշտություն նվագել, երաժշտություն, որը երբեք չէի նվագել ու չէի լսել: Եվ հետո այն բառերը գրեցի, որոնք շարադրում էի մտքիս մեջ»: Այդ երգը «Առ ձեռքն իմ, անգի՛ն Տեր» երգն է, որը այսօր թարգմանվել է 32 լեզուներով եւ երգվում է միլիոնավոր մարդկանց կողմից:

Վարդան Սարգիսյան

Տիրոջ վախը

Նախքան 12-ին ծառայության ուղարկելը Տեր Հիսուսն ասաց նրանց. «Եվ մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն սպանում են ու հոգին չեն կարող սպանել, բայց ավելի նրանից վախեցեք, ով կարող է գեհեճի մեջ կորցնել հոգին էլ, մարմինն էլ» (Մատթ. 10:28): Աստված է, որ կարողություն ունի հոգին ու մարմինը կորցնելու:

Շատ տարիներ Աստծո վախը ճշմարիտ աստվածաշնորհության հոմանիշն էր, բայց այս վերջին տարիներին, հատկապես ավետարանական քրիստոնյաների մոտ, Աստծո վախի գաղափարը արժեզրկվեց եւ կորցրեց իր իմաստը: Ճիշտ է՝ Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ սիրո մեջ վախ չկա (Ա Հովհ. 4:18), սակայն, այնուամենայնիվ, Աստվածաշունչը մեզ նաեւ պատվիրում է, որ մենք մեր անձերի փրկությունը ահով ու դողով գործենք (Փիլիպպ. 2:12): Ուստի մեր առջեւ դրված հարցը այս է. արդյո՞ք վերստին ծնված հավատացյալը պետք է Աստծո երկյուղը ունենա, թե՞ ընդհանրապես ազատ է այդ բանից: Այս հարցի սխալ պատասխանը անձին կարող է չափազանց օրինապաշտության հասցնել կամ էլ չափազանց ազատության եւ անկարգապահության: Այս հողվածով պիտի աշխատե՞ն լուսաբանել հավատացյալի ճիշտ դիրքը Աստծո վախի նկատմամբ:

Աստծո վախը ի հայտ է գալիս երկու կերպերով: **Առաջինը՝** պատժից վախենալն է: Ա Հովհաննես 4:18-ն ասում է. «Կատարյալ սերը հեռացնում է վախը»: Եվ քանի որ վախը պատժվելու հետ կապ ունի, ուրեմն մեղավոր մարդը վախենում է Աստծուց, քանի որ գիտի, որ ինքն արժանի է պատժի: Երբ Ադամը մեղանչեց, փորձեց թաքնվել, քանի որ վախեցավ (Ծննդոց 3:10): Նա իր սրտի խորքում գիտակցեց, որ ինքն արժանի է պատժի, եւ դրա համար վախ ուներ: Վերստին ծնված քրիստոնյայի համար այս վախը գոյություն չունի, որովհետեւ իր մեղքերի պատիժը Տեր Հիսուսը կրել է խաչի վրա: Աստվածաշունչն ասում է. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար» (Հռոմ. 8:1): Հավատացյալը Քրիստոսով կարող է վստահ լինել, որ իր մեղքերը իրենից հավիտյան հեռացված են, Քրիստոսի արդարությունը դարձել է իր արդարությունը, եւ ինքն Աստծո առջեւ սուրբ եւ առանց մեղադրանքի է: Հավատացյալի համար պատժի վախ կամ փրկության վերաբերյալ որեւէ կասկած աստանայից է, եւ դրանք պետք է հանդիմանվեն Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

Երկրորդը ներկայացված է Ա Պետրոս 1:17-19 համարներում, որոնք առում են. «Եվ եթե Հայր եք կոչում Նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն մեկի գործի համեմատ, ապա ձեր պանդխտության ժամանակը երկյուղով անցկացրեք՝ իմանալով, որ ձեր հայրենավանդ ունայն կյանքից ոչ թե արծաթով կամ ոսկով փրկվեցիք, այլ Քրիստոսի պատվական արյունով, ինչպես մի անբիծ ու անարատ գառան»: Հատակ է, որ այս խոսքը ուղղված է հավատացյալներին, որոնց Պետրոսը հիշեցնում է իրենց փրկության պատվականությունը եւ հորդորում է, որ վախով անցկացնեն իրենց օրերը երկրի վրա, քանի որ իրենց գործերը պիտի դատվեն անաչառ դատավորի կողմից: Ուստի սա պատժից վախենալու վախը չէ, այլ այն վախն է, որն առաջանում է այն բանի ընկալումից, որ մեր բոլոր գործերն ու մտքերը պիտի դատվեն ամենագետ Աստծո կողմից: Այս վախը մեզ մղում է Աստծո եւ Նրա պատվերներին լրջությամբ վերաբերվելու:

Մենք կարդում ենք, որ երբ Անանիան եւ Սափիրան մեղանչեցին սուտ խոսելով եւ պատժվեցին մահվամբ, մեծ վախ տարածվեց եկեղեցում (Գործք Առաքելոց 5:5): Հավատացյալները չվախեցան, որ կորցրին իրենց փրկությունը, այլ գիտակցեցին, թե որքան լրջորեն է Աստված վարվում իր զավակների հետ, եւ որքան զգուշությամբ պետք է քայլեն Տիրոջ ճամփաներով: Իհարկե, հավատացյալի համար այս սուրբ երկյուղը Սուրբ Հոգու միջոցով է ի հայտ գալիս նրա կյանքում: «Բայց եկեղեցիներն ամբողջ Հրեաստանում՝ Գալիլիայում եւ Սամարիայում խաղաղություն ունեին. շինություն էին ստանում եւ Տիրոջ երկյուղով ընթանում եւ շատանում էին Սուրբ Հոգու մխիթարությամբ» (Գործք Առաքելոց 9:31):

Աստծո վախի ճշգրիտ ընկալումը քրիստոնյային ազատում է օրինապաշտության լծից, բայց միաժամանակ պահպանում է վախելու երկյուղն ու հարգանքն Աստծո նկատմամբ: Աստծո երկյուղը հավատացյալին առաջնորդում է հաղթական կյանք ապրելու հետեյալ կերպով՝

1. պահում է անձը մեղք գործելուց (Ելից 20:20),
2. առաջնորդում է ճշմարիտ երկրպագության (Եբր. 12:28),
3. կատարելագործում է սրբությունը (Բ Կորնթ. 7:1):

Թո՛ղ Աստծո սուրբ վախը առաջնորդի քո քայլերը, որպեսզի Տեր Հիսուս Քրիստոսը փառավորվի քո կյանքում:

Հովիվ՝ Հրաչ Հակոբյան

Հարատևություն (մաս 2)

**«Խոստումները ժառանգողներին նմանվող լինեք հավատով
ու համբերատարությամբ»: Եբր.6:12բ**

Այս սերտողության շարքի իմ 1-ին հոդվածում գրել էի, որ հավատքի հիմնական ուսմունքներում հաստատուն մնալով եւ Քրիստոսին հետևելու գինը հաշվի առնելով՝ մենք Տիրոջ հետ երկարատև ճամփա քայլելու գրավականը ապահոված կլինենք: Մակայն առանց Աստծո հավատարմության մեր ջանքն ու հարատևելու կամքը փուչ է:

3) Հավատա՛ Աստծո հավատարմությանը (Եբրայեցիներին 6:10-12)

Մենք կարող ենք հարատևել միայն մեր հավատքի մեջ, քանի որ Աստված մեր նկատմամբ համբերատար է: Նույնիսկ երբ մեր հավատքը տկարանում է, Նա հավատարիմ է մնում մեզ: Նա հավատարիմ Հայր է. համբերությամբ սպասում է անառակ որդու վերադարձին: Այո՛, եթե ուրանանք Նրան, Նա էլ մեզ կուրանա: Մակայն Աստծուն ուրանալը բողոքովին տարբերվում է հավատքի մեջ տկարանալուց (Բ Տիմ. 2:11-13): Ուրանալ Քրիստոսին նշանակում է մեր կռնակը դարձնել Նրան եւ մերժել Նրա ներումը, ինչպես որ Հուդան արեց: Բայց Պետրոսը տկարության պահի մեջ ուրացավ իր Տիրոջը երեք անգամ, սակայն հետո ընդունեց Տեր Հիսուսի ներումը, ապաշխարեց եւ դարձի եկավ:

Եթե Աստված մեզնից Իր հույսը երբեք չի կտրում, հապա ինչու մենք կտրենք մեր հույսն ու հարատևությունը: Եթե հուսահատված ես, եթե կարծում ես, որ ձախտովել ես, հիշիր այն գործը, որ Աստված կատարել է քո կյանքում, եւ վստահիր Նրան, որ ավելին շարունակի կատարել:

4) Հավատքդ գորացրո՛ւ (Եբրայեցիներին 6:12-15)

Մենք մեր հավատքը գորացնում ենք ուրիշներից սովորելով: Երիտասարդները սովորում են՝ նայելով իրենց ծնողներին, մարզիկները սովորում են իրենց մարզիչներից եւ այլն: Նույնն է հոգեուր կյանքում: Մենք կարիք ունենք գտնելու եղբայրներ եւ քույրեր, որոնք մեզ հետ պատրաստ են ժամանակ անցկացնելու, որոնք պատրաստ են իրենց փորձառությունները պարկեշտորեն մեզ փոխանցելու՝ թե՛ հաջողությունները եւ թե՛ ձախտությունները, ուրախություններն ու տխրությունները:

Մենք մեր հավատքը կարող ենք գորացնել նաեւ կարդալով պատմություններ ուրիշ հավատացյալների կյանքերի մասին, որոնք այս ճամփոր-

դրությունը արդեն ավարտել են: Լեռ բարձրացողը հետևում է իրենից առաջ եղող բարձրացողի քայլերին: Աստվածաշունչը լի է հավատքի հերոսների կյանքի օրինակներով, որոնց մասին համառոտ կերպով կարող ենք կարդալ Եբրայեցիներին 11-րդ գլխում:

Ամեն ինչից ավելի մենք մեր հավատքը զորացնում ենք, երբ օգտագործում ենք այն՝ մեզ վատություն ցանկացողներին սեր ցուցաբերելով, նաև երբ մեզ հալածողների և նեղություն սվողների հանդեպ համբերություն ենք ցուցաբերում, եւ երբ մեր ունեցածը տալիս ենք նրանց, ովքեր կարիքի մեջ են (Դուկ. 14:33):

Դուկ.՝ Արմեն Կաթավյան



Հարցազրույց Վեր. Նշան Ուլաշյան եղբոր հետ

- Դուք բնիկ ո՞ր երկրից եք:
- Ես Սիրիայի Հալեպ քաղաքից եմ: 14 տարեկան հասակում ապաշխարեցի եւ կյանքս Քրիստոսին նվիրեցի: Վեց տարի հետո Տերը ինձ կանչեց իր գործին: Որ անկյունը փախա, Տերը իմ առջեւ կանգնեց, եւ վերջապես «այո» ասացի Նրան:
- Որքա՞ն ժամանակ է, որ ծառայում եք Հայաստանում:
- 16-րդ տարին է, որ Հայաստան եմ գալիս՝ ամեն տարի երկու ամսով:
- Ի՞նչ հոգեւոր փոփոխություններ տեսաք այս տարիների ընթացքում:
- Ժողովրդի դժվարություններից եւ խնդիրներից բացի եւ Աստծո խոսքի մեծ սով եմ տեսնում: Հայաստան այցելության ժամանակ երբ մեկ անձ ապաշխարում է իմ միջոցով, մտքիս մեջ ինքս ինձ ասում եմ. «Ուրեմն արժեր գալս, արժեր հոգնությունս»: Փառք Աստծո, որ ամեն անգամ Տերը լավ հունձք է տալիս եւ դարձի եկողներից ոմանք էլ հիմա արդեն



եկեղեցում ծառայություններ են անում: 180-ից ավելի մարդիկ այս տարվա այցելության ժամանակ իմ ծառայությունների միջոցով Տիրոջը դարձան: Թող փառքը միայն Տիրոջը լինի:

- Եթե քաջալերական խոսքով ուզեիք դիմել Հայաստանում ծառայող ուրիշ միսիոներներին, ի՞նչ կասեիք նրանց:

- Այն, ինչ որ ձեռքիդ մեջ կգտնես, ամբողջ ուժովդ արա եւ մի հուսահատվիր, եթե արդ-

յունքները անմիջապես չտեսնես: Նրա խոսքը դատարկ պիտի չվերադառնա, իսկական արդյունքը մի օր պիտի տեսնես Երկրնքում կամ մի քանի տարի անց: Ես փրկության վկայություններ եմ լսել այն մարդկանց մասին, ովքեր 42, 43 տարի առաջ իմ միջոցով դարձի են եկել: Զարոգիր միայն Աստծո խոսքը, քարոզիր՝ ունենալով Աստծո օծությունը, եւ խոսիր, ինչպես խոսեց Հիսուսը՝ իշխանությամբ եւ հեղինակությամբ, եւ եթե հավատարիմ գտնվենք, մի օր Իրենից պիտի լսենք «Բարի եւ հավատարիմ ծառա, մտիր Հորդ ուրախությունը» խոսքերը:

- Արդյո՞ք ունեք հատուկ օրհնություն կամ վկայություն, որի մասին կուզեիք պատմել մեր ընթերցողներին:

- Շատ փորձառություններ ունեմ, բայց ուզում եմ երեկվա օրհնության մասին պատմել ձեզ: 2007 թվականի հոկտեմբերի 26-ին հրավիրված էի քարոզելու Սեւան քաղաքում՝ մշակույթի կենտրոնի սրահում: Երկու եղբայրներ երկու օրում հրավիրատոմսեր եւ թերթիկներ էին բաժանել: Անձրետոտ օր էր: Այդ եղբայրներից մեկը ինձ ասաց.

- Նշան եղբայր, երեւի այդքան մարդ չհավաքվի այսօր:

Սակայն, փառք Աստծո, տեղը լեփեցուն էր: 300-ից ավելի մարդիկ էին եկել՝ չնայած անբարենպաստ եղանակին: Եվ երբ քարոզեցի ու ապաշխարության կոչ տվեցի, 65-70 մարդիկ արձագանքեցին եւ առջեւ եկան՝ Տիրոջն ընդունելու որպէս անձնական Փրկիչ: Ժողովից հետո եղբորն ասացի.

- Եղբայր, Տերը քեզ հուսախաբ արեց, բայց լավ հուսախաբություն էր: